

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« » _____ 2010թ.

h. _____

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի թիվ 300 որոշմամբ

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի ժուռնալիստների միությանը /ՀՎՀՀ 02509992/ սեփականության իրավունքով պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող Կենտրոն վարչական շրջանի Պուշկինի 3ա հասցեում գտնվող և Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈՒԱԶ» ՍՊ ընկերությանը /ՀՎՀՀ 00007687/ սեփականության իրավունքով պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող Արաբկիր վարչական շրջանի Ն.Տիգրանյան 15-17 հասցեում գտնվող շինությունների մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ համապատասխանաբար 2455.8 հազար դրամ /ապառք՝ 1838.2 հազար դրամ, տույժ՝ 617.6 հազար դրամ/ և 1379.8 հազար դրամ /ապառք՝ 1007.5 հազար դրամ, տույժ՝ 372.3 հազար դրամ չափով/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի ժուռնալիստների միությանը և Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈԻԱԶ» ՍՊ Ընկերությանը պատկանող հասարակական նշանակության շինությունների մասով «ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Հայաստանի ժուռնալիստների միությունը կենտրոն վարչական շրջանի Պուշկինի փող. հ.3ա հասցեում տեղակայված սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի /գույքահարկով հարկվող օբյեկտի/ համար 14.10.2010թ. դրությամբ ունի 2455.8 հազար դրամի չափով գույքահարկի պարտք, (որից 1838.2 հազար դրամ ապառք, 617.6 հազար դրամ տույժ), որի համար 17.09.2010թ. հ. 21 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով, հաջորդաբար Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈԻԱԶ» ՍՊ Ընկերությունը Արաբկիր վարչական շրջանի Ն. Տիգրանյան 15-17 հասցեում տեղակայված սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի /գույքահարկով հարկվող օբյեկտի/ համար 14.10.2010թ. դրությամբ ունի 1379.8 հազար դրամի չափով գույքահարկի պարտք, (որից 1007.5 հազար դրամ ապառք, 372.3 հազար դրամ տույժ), որի համար 24.08.2010թ. հ. 01-3/33 գրությամբ դիմել է Երևան քաղաքի ավագանու ՀՀԿ խմբակցության ղեկավարին, վերջինս էլ 08.09.2010թ. հ. 36/0043 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալին՝ գույքահարկի գծով հարկային պարտավորությունների մասով արտոնություն ստանալու խնդրանքով:

Հայաստանի ժուռնալիստների միությունը ֆինանսական լուրջ խնդիրներ ունի և չի կարողանում լուծել՝ ոչ միայն ստեղծագործական հարցերը /լրագրողների վերապատրաստման դասընթացներ, ստեղծագործական մրցույթներ և այլն/, այլև կատարել իր պարտականությունը՝ վճարել գույքահարկ:

Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈԻԱԶ» ՍՊ Ընկերությունը գտնվում է ֆինանսական սուղ պայմաններում և ստեղծված իրավիճակը հնարավորություն չի ընձեռել վճարելու գույքահարկի գծով հարկային պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հայաստանի ժուռնալիստների միության և Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈԻԱԶ» ՍՊ Ընկերության կողմից մշտապես իրականացվող ստեղծագործական և հասարակական գործունեությունը, ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մարզերում, առաջարկվում է Հայաստանի ժուռնալիստների միության և Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈԻԱԶ» ՍՊ Ընկերության նկատմամբ սահմանել 3.835.6 (երեք միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար վեց հարյուր) հազար դրամի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորությունների մասով արտոնություն:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ժուռնալիստների միությանը և Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈՒԱԶ » ՍՊ Ընկերությանը ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ժուռնալիստների միությունը կենտրոն վարչական շրջանի Պուշկինի փող. հ.3ա հասցեում տեղակայված սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի /գույքահարկով հարկվող օբյեկտի/ համար 14.10.2010թ. դրությամբ ունի 2455.8 հազար դրամի չափով գույքահարկի պարտք, (որից 1838.2 հազար դրամ ապառք, 617.6 հազար դրամ տույժ), որի համար 17.09.2010թ. հ. 21 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով, հաջորդաբար Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈՒԱԶ » ՍՊ Ընկերությունը կենտրոն վարչական շրջանի Ն. Տիգրանյան 15-17 հասցեում տեղակայված սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի /գույքահարկով հարկվող օբյեկտի/ համար 14.10.2010թ. դրությամբ ունի 1379.8 հազար դրամի չափով գույքահարկի պարտք, (որից 1007.5 հազար դրամ ապառք, 372.3 հազար դրամ տույժ), որի համար 24.08.2010թ. հ. 01-3/33 գրությամբ դիմել է Երևան քաղաքի ավագանու ՀՀԿ խմբակցության ղեկավարին, վերջինս էլ 08.09.2010թ. հ. 36/0043 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալին՝ գույքահարկի գծով հարկային պարտավորությունների մասով արտոնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով Հայաստանի ժուռնալիստների միության (17.09.2010թ. հ. 21) և Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈՒԱԶ » ՍՊ Ընկերության գրությունները ուղղված Երևանի քաղաքապետին և Երևան քաղաքի ավագանու ՀՀԿ խմբակցության ղեկավարին (24.08.2010թ. հ. 01-3/33), վերջինս էլ (08.09.2010թ. հ. 36/0043) գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալին՝ գույքահարկի գծով արտոնություն ստանալու վերաբերյալ, Հայաստանի ժուռնալիստների միության և Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈՒԱԶ » ՍՊ Ընկերության կողմից մշտապես իրականացվող ստեղծագործական և հասարակական գործունեությունը, ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մարզերում, նպատակահարմար եմ գտնում Հայաստանի ժուռնալիստների միությանը և Հայաստանի կույրերի միավորում «Երևանի թիվ 3 ՈՒԱԶ » ՍՊ Ընկերությանը տրամադրել 3.835.6 (երեք միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար վեց հարյուր) հազար դրամի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորությունների մասով արտոնություն: